ավելի է կոնկրետացվել՝ ընդգրկելով մի շարք նոր պրոբլեմներ։ Այնուհետև Վ. Համբարձումյանը հանգամանորեն անդրադարձավ գիտությունների ակադեմիայում կատարվող տնտեսագիտական հետազոտություններին, նշեց, որ հասուն սոցիալիզմի հասարակության զարգացման և կատարելագործման գիտական պրոբլեմների խոր ու համակողմանի հետազոտման գործում մեծ անելիքներ ունեն պատմաբանները, փիլիսոփաները, սոցիոլոգները, ինչպես և հումանիտար գիտությունների մյուս ճյուղերի ներկայացուցիչները։

Վերջում Վ. Համբարձումյանը ՀԿԿ կենտկոմին, հանրապետության կառավարությանը հավաստիացրեց, որ ակադեմիայի գիտական կոլեկտիվները այսուհետև ևս իրենց շանքերը կենտրոնացնեն կուսակցության առաջադրած խնդիրները իրագործելու համար։

Իրենց ելույթներում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Նալբանդյանը, Բ. Առաքելյանը, Մ. Կասյանը, Գ. Ղարիբյանը, Է. Աֆրիկյանը և Գ. Բուռայանը անդրադարձան հանրապետության գիտական կոլեկտիվների առջև ծառացած անհետաձգելի խնդիրներին, նշեցին, որ բաժանմունքներում միջոցներ են ձեռնարկվել մանրաթեմայնությունը վերացնելու ուղղությամբ, խոսեցին նաև հիմնարար հետազոտությունների հետագա խորացման, գիտության և տեխնիկայի նվաճումները արտադրության մեջ ներդնելու ժամկետների կրճատման, առաջավոր տեխնիկայի լայն արմատավորման, երիտասարդ գիտնականների դաստիարակության անհրաժեշտության մասին։

Փոդովն ընդունեց ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացի հետագա արագացմանն ուղղված հանձնարարական։

«ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

1983 թ. նոյեմբերին Երևանում կայացավ ՍՍՀՄ ԳԱ «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության պատմությանն կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհրդի և նրա հայկական մասնաճյուղի, ՍՍՀՄ պատմության ինստիտուտի, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի. Համ/ԿԵՄ Կենտկոմին կից Բարձրագույն կոմերիտական դպրոցի, Հ/ԿԵՄ Կենտկոմի և ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության կազմակերպած համամիութենական գիտական կոնֆերանս՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և երիտասարդությունը» թեմայով։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին երկրի 12 քաղաքների 42 գիտնականներ, որոնք քննարկման ներկայացրին 31 զեկուցում։

Պլենար նիստը բացեց Յու. Ի. Կորաբլյովը, որն ընդգծեց կոնֆերանսի գիտական ու գործնական մեծ նշանակությունը։ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն իր ելույթում մասնավորապես նշեց, որ երիտասարդության դաստիարակության հարցերը միշտ էլ գտնվել են հանրապետության գիտությունների ակադեմիայի ուշադրության կենտրոնում։ Սովետական հասարակության մեջ կոմերիտմիության դերի մասին խոսեց Հ/ԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ս. Թոփուզյանը։ Ընթերցվեց նաև կոնֆերանսին ուղղված ՍՍՀՄ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևի նամակը։

Կոնֆերանսում Վ. Ի. Դեսյատերիկը (Մոսկվա) զեկուցում կարդաց երիտասարդության դաստիարակության գործում լենինյան դաղափարների պատմական նշանակության մասին թեմայով։ Նա անդրադարձավ սովետական պատմագիտության մեջ երիտասարդական կոմունիստական շարժման հարցերին և նշեց առավել քիչ լուսաբանված պրոբլեմները։ Խաղաղության համար երիտասարդական շարժման ակտիվացման գործում պատմաբանների ներգրման մասին խոսեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը (Երևան)։ Կոմերիտմիության կուսակցական ղեկավարության բնույթի և ձևերի մասին զեկուցումով հանդես եկավ Վ. Կ. Կրիվորուչենկոն (Մոսկվա)։ Ա. Յա. Լեյկինը (Լենինգրադ) իր ելույթում անդրադարձավ երիտասարդության համար բոլշևիկների մղած պայքարի փորձին։ 1917—1923 թթ. Արևմտյան Եվրոպայում երիտասարդական շարժումների վրա Հոկտեմբերյան հեղափոխության թողած ազդեցության մասին խոսեց Հ. Ա. Ավետիսյանը (Երևան)։ Զեկուցողը նշեց, որ Հոկտեմբերյան հեղափոխության պատմական փորձը հիմք հանդիսացավ Իտալիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Դանիայում և Նորվեգիայում հեղափոխական վերելքի համար։

Կոնֆերանսի աշխատանքներն անց էին կացվում սեկցիաներով։ «Կուսակցությունը և երիտասարդությունը, հոկտեմբերյան դաղափարների ազդեցությունը» սեկցիայի նիստը բացեց Վ. Գ. Կոլիսեր (Մոսկվա)։ Նրա զեկուցումը նվիրված էր երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ՍՄԿԿ դերին։ Սովետական իշխանության համար մղված պայքարի

տարիներին ժողովրդի հասարակական-քաղաքական բարձր ակտիվությանը և այժմյան պայմաններում նրա դրսևորման հարցերին անդրադարձավ Դ. Ա. Դեռասիմենկոն (Մոսկվա)։ Վ. Վ. Պրիվալովը (Լենինգրադ) զեկուցեց երիտասարդության միջազգային կոմունիստական շարժման պատմագիտության պրոբլեմների և այն խնդիրների մասին, որոնք դեռևս կանգնած են ուսումնասիրողների առջև։ Ա. Ա. Դալագանի (Մոսկվա) ելույթը նվիրված էր կոմերիտական մամուլի կառուցվածքի ձևավորմանը։ Նա մասնավորապես կանգ առավ կոմերիտական մամուլի պարբերացման հարցերին։ Մ. Ֆ. Դիմիտրիենկոն (Կիև) իր զեկուցման մեջ անդրադարձավ ուկրաինական ժողովրդական պոեզիայի մեջ Մեծ Հոկտեմբերի թեմային։ Ուկրաինայում սովետական իշխանության համար մղված պայքարին երիտասարդության ունեցած մասնակցության վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան Վ. Դ. Բոռենիկովը և Ի. Պ. Վինոգրադովը (Դնեպրոպետրովսկ)։ Ե. Վ. Տարանովի (Մոսկվա) հաղորդումը նվիրված էր կոմերիտմիության մասնակցությանը երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանի իրագործմանը։ Սովետական բանվոր երիտասարդության ինտերնացիոնալ կապերին էր նվիրված Ն. Կ. Պետրովայի (Մոսկվա) զեկուցումը։ Վ. Ա. Կուդինովի (Կոստրոմա) զեկուցումն ընդգրկում էր 1920-ական թվականների պիոներական շարժման կազմակերպչական ձևավորման հարցերը։ Վ. Ա. Զալիկովայի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր զարգացած կապիտալիստական երկրներում երիտասարդության սոցիալական շարժումներին, իսկ Ի. Ե. Խոմենկոյինը (Մոսկվա)՝ Ասիայի երկրներում երիտասարդական շարժումներին։

«Երիտասարդությունը ռուսական երեք հեղափոխություններում» սեկցիայի աշխատանքներում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ուսանողական շարժումներին։ Ա. Ե. Իվանովի (Մոսկվա) զեկուցման մեջ լուսաբանվեց ընդհանուրի և առանձնահատուկի հարցն ուսանողության սոցիալական վարքում՝ 1905—1917 թթ.։ Օ. Վ. Վոլոբուևը և Ա. Վ. Ուշակովը (Մոսկվա)՝ իրենց զեկուցման մեջ անդրադարձան Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման և իրագործման ընթացքում դպրոցականների կտրուկ քաղաքական տարազատման պրոցեսին։ Ուսանողական խմբակների գործունեության և սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ Անդրկովկասի սովորող երիտասարդության մասնակցության մասին խոսեց Շ. Բ. Օնանջանյանը (Երևան)։ Ուսանողական շարժման պատմության աղբյուրների դասակարգման պրոբլեմին էր նվիրված Ն. Գ. Գեորգիևայի զեկուցումը (Մոսկվա)։ Լ. Ա. Մոժաևան (Մոսկվա) իր հաղորդման մեջ վերլուծեց 1917—1918 թթ. պրոլետարական պատանեկական շարժմանը վերաբերող մի շարք փաստաթղթեր, որոնք հայտնաբերվել են մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական և այլ կուսակցական արխիվներում։ Ուկրաինայի երիտասարդության կոմունիստական շարժմանը նվիրված պատմագրական ակնարկով հանդես եկավ Յու. Մ. Գամրեցկին (Կիև)։ Ռ. Լ. Խուրշուդյանը (Երևան) հանդես եկավ «Հայաստանի երիտասարդությունը սովետական իշխանության հաղթանակի և ամրապնդման պայքարում 1919—1921 թթ. (ուսումնասիրման պատմությունը)» հաղորդմամբ։ Դոնում և Հյուսիսային Կովկասում 1918—1921 թթ. երիտասարդական շարժումների մասին խոսեցին Ա. Ի. Կոզլովը, Լ. Ա. Էռեենկոն (Դոնի-Ռոստով) և Ն. Ֆ. Բուգայը (Մոսկվա)։ Վրաստանի կոմերիտմիության ստեղծման և սովետական իշխանության համար նրա պայքարի մասին զեկուցեց Զ. Ա. Ակուրջանովան (Թբիլիսի)։ Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում երիտասարդության մասնակցությանն էին նվիրված Ռ. Է. Զեյնալովի և Վ. Դ. Դուրարադու (Բաքու) հաղորդումները։ Յու. Պ. Բազուշառուկասը (Վիլնյուս) անդրադարձավ Մերձբալթիկայում կոմունիստական երիտասարդական միությունների կազմակերպչական-քաղաքական ձևավորման հարցերին, իսկ Ա. Ս. Նասուլենկոն (Քիշինև) իր հաղորդման մեջ լուսաբանեց կոմունիստական կուսակցության պայքարը՝ Մոլդավիայի երիտասարդությանը հեղափոխական շարժման մեջ ներգրավելու համար։

Ըստ սեկցիաների տեղի ունեցած մտքերի փոխանակությանը մասնակցեցին Լատվիայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Կ. Բիռոնը (Ռիգա), Կ. Ս. Խուդավերդյանը (Երևան), Յու. Մ. Գամրեցկին (Կիև) և ուրիշներ։

Պլենար նիստում Յու. Ի. Կորաբլյովը, Վ. Կ. Կրիվորուչենկոն և Ա. Կ. Բիռոնը ամփոփեցին սեկցիաների, ապա և կոնֆերանսի աշխատանքները։

Ընդունվեցին գիտապրակտիկ բնույթի առաջարկություններ։

ԴԱՎԹԱՆԻ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ